ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/14 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով կոմուտատորների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման, գնահատման և ամփոփման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 12.03.2025թ. ժամը 12:00-ին
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Դավթյանը
Անդամներ՝ Ս. Քոչարյանը
Ա. Հարությունյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Նիկոլյանը

Կոմուտատորների ձեռքբերման նպատակով eauction.armeps.am համակարգի միջոցով հայտերի բացման նիստի վերաբերյալ

1. **Հանձնաժողովը արձանագրեց.**

Հայտերը բացվել են էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am կայքի միջոցով, ս.թ. մարտի 10-ին, ժամը 10:00-ին:

Հակադարձ աճուրդը պետք է կայանար մարտի 11-ին ժամը 10:00-10:30 ժամանակահատվածում, սակայն ՀՀ ֆինանսների նախարարության ցանցային ենթակառուցվածքներում տեխնիկական խնդիրների հետևանքով նշված ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի համակարգը անհասանելի էր, ինչի հետևանքով հակադարձ աճուրդը չի կայացել:

2. **Հանձնաժողովը որոշեց**

2.1 Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով 11.03.2025թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված թիվ 03/26-1/5538-2025 գրությունը, ղեկավարվելով 02.05.2019թ. N 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

2.2 Հաստատել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

2.3 Հայտարարել նոր մրցույթ և հայտերի ներկայացման ժամկետ սահմանել 24.03.2024 ժամը 10:00-ին

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Դավթյան

անդամներ՝ Ս. Քոչարյան

Ա. Հարությունյան

քարտուղար՝ Մ. Նիկոլյան